

5.4. Դպրոցական կրթության որակի, չհաշվառվող (մասնավոր) վճարովի դպրոցական ուսուցման (ռեպետիտորության), պետական ԲՈՒՅ ընդունելության քննությունների մասին
(ըստ դիմորդների և նրանց ուղեկցող ծնողների ընտրանքային հարցումների արդյունքների)

Համաձայն UNESCO-ի սահմանած չափորոշների, դպրոցական կրթության որակի ցուցանիշները հիմնականը կրթական տարբեր մակարդակների ծրագրերը հաջողությամբ յուրացրած աշակերտների տոկոսաբաժինն է հանրակրթական տվյալ մակարդակի ավարտական դասարանի աշակերտների ընդհանուր թվաքանակում: Ըստ պետական վիճակագրության, 1999/2000 ուսումնական տարում հիմնական տարրական և միջին կրթական ծրագրերն հաջողությամբ ավարտած աշակերտների մասնաբաժինը կազմել է ավելի քան 95%: Ընդ որում ընդհանուր տարրական մակարդակում այդ ցուցանիշն ավելի բարձր է՝ մոտ 98%: Կրթական համակարգի բարելավման հաջողություններից կարելի է համարել հանրակրթական բոլոր մակարդակներում այդ ցուցանիշի աճի միտում ունենալը:

Որակական գնահատման այդպիսի մոտեցման կիրառումն ընդհանուր միջնակարգ կրթամակարդակում բավարար չէ, քանզի միջնակարգ դպրոցի շրջանավարտների գիտելիքներին ներկայացվող պահանջները շատ ավելի բարձր են: Ի լրումն երաշխավորվող ցուցանիշի, անհրաժեշտ է դիտարկել ավարտական դասարանների աշակերտների գիտելիքների մակարդակի համապատասխանությունն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար (օրինակ, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններ) ներկայացվող պահանջներին:

Դպրոցական կրթության որակի, մասնագիտական կողմնորոշումների, ընդունելության համակարգի և դրանց հետ առնչվող մի շարք հարցերի մասին բնակչության կարծիքը պարզելու նկատառումով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն արդեն հինգերորդ տարին է հանրապետության ԲՈՒՅ-երի դիմորդների և նրանց ուղեկցող ծնողների շրջանում անցկացնում է միանվագ ընտրանքային հարցում: 2000թ. հարցումներում ընդգրկվել են Երևանի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի պետական ԲՈՒՅ-երի 300 դիմորդներ և նրանց ուղեկցող ծնողներ:

Հետազոտված դիմորդներից մեկը 14 տարեկան է, 15.0%-ը 16 տարեկան են, 60.7%-ը՝ 17 տարեկան, 18.0%-ը՝ 18 տարեկան, մնացածը՝ 19-ից 26 տարեկան, 35.7%-ը երևանցիներ են, 86.7%-ը՝ քաղաքաբնակներ, 59.7%-ը՝ աղջիկներ: Դիմորդների 85.3%-ը ավարտել են հանրակրթական դպրոց, 6.7%-ը՝ վճարովի ուսումնական հաստատություն, 5.7%-ը՝ մասնագիտացված միջնակարգ կրթօջախ, 2.0%-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 0.3%-ը՝ այլ ԲՈՒՅ, ընդ որում 79.7%-ը ավարտել են 2000թ., 15.3%-ը՝ 1999թ.: Երկրորդ և ավելի անգամ դիմողների 47.4%-ը նախորդ տարում ստացել են անբավարար գնահատական, 26.3%-ը թողել են ուսումը նյութական վատ պայմանների պատճառով, 8.8%-ը՝ մասնագիտության սխալ ընտրության պատճառով, 14.0%-ը մրցույթից դուրս մնացածներն են: Դիմորդների 62.6%-ը ծառայողի ընտանիքից են, 16.3%-ը՝ բանվորի: Հետազոտված ծնողների 53.7%-ը վարձու աշխատող են, 21.3%-ը՝ տնային տնտեսուհի, 9.7%-ը՝ գործազուրկ, 9.0%-ն ինքնազբաղված, 3.3%-ը՝ չեն աշխատում, 3.0%-ը՝ գործատու:

Ընտանիքի սոցիալական վիճակն ըստ դիմորդների և ծնողների /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | | Հարուստ | Ունևոր | Միջին | Աղքատ | Չքավոր |
|-------------|----------------|---------|--------|-------|-------|--------|
| Ընդամենը | ըստ դիմորդների | 0.3 | 4.3 | 78.7 | 16.7 | 0 |
| | ըստ ծնողների | 0.3 | 3.3 | 76.7 | 19.3 | 0.3 |
| Երևան | ըստ դիմորդների | 0.5 | 5.5 | 75.5 | 18.5 | 0 |
| | ըստ ծնողների | 0.5 | 4.0 | 73.5 | 21.5 | 0.5 |
| Գեղարքունիք | ըստ դիմորդների | 0 | 10.0 | 60.0 | 30.0 | 0 |
| | ըստ ծնողների | 0 | 10.0 | 60.0 | 30.0 | 0 |
| Լոռի | ըստ դիմորդների | 0 | 0 | 100.0 | 0 | 0 |
| | ըստ ծնողների | 0 | 0 | 95.0 | 5.0 | 0 |
| Շիրակ | ըստ դիմորդների | 0 | 2.0 | 82.0 | 16.0 | 0 |
| | ըստ ծնողների | 0 | 2.0 | 80.0 | 18.0 | 0 |
| Սյունիք | ըստ դիմորդների | 0 | 0 | 100.0 | 0 | 0 |
| | ըստ ծնողների | 0 | 0 | 100.0 | 0 | 0 |
| Տավուշ | ըստ դիմորդների | 0 | 0 | 80.0 | 20.0 | 0 |
| | ըստ ծնողների | 0 | 0 | 80.0 | 20.0 | 0 |

Դիմորդների և ծնողների մոտ նկատվում է որոշակի ձևավորված մոտեցում բարձրագույն կրթություն ստանալու հարցում: Այսպես, դիմորդների 52.3%-ը և ծնողների 54.7%-ը գտնում են, որ բարձրագույն կրթությունն անհրաժեշտություն է, համապատասխանաբար 41.7%-ը և 43.3%-ը՝ ապահով ապագայի գրավական է: Հարցմանը մասնակցած դիմորդների 64.3%-ը մասնագիտության ընտրությունը կատարել են սեփական կողմնորոշմամբ, 33.0%-ը՝ առաջնորդվել են ծնողների խորհրդով, մնացածը հաշվի են առել բարեկամների և ընկերների կարծիքը:

Մեծ է դժգոհությունը և անվստահությունը դպրոցում ստացած գիտելիքների որակի նկատմամբ: Այդ միտքն են արտահայտել դիմորդների 87.0%-ը, այն էլ այն դեպքում, երբ նրանց 93.0%-ը դպրոցն ավարտել են լավ և գերազանց գնահատականներով: Մրցութային քննությունների համար անհրաժեշտ առարկայական գիտելիքների խորացման նպատակով դիմորդները դպրոցից զատ մասնակցել են մասնավոր վճարովի պարապմունքների:

Դիմորդների թվաքանակի բաշխվածությունն ըստ արտադասարանական և արտադպրոցական պարապմունքների տեսակների /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|--------------------------------|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Արտադասարանական անվճար | 9.5 | 1.2 | 0.5 | 1.6 | 2.3 | 3.5 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Արտադասարանական վճարովի | 11.8 | 4.9 | 12.3 | 16.5 | 9.3 | 6.5 | 10.0 | 5.0 | 16.0 | 30.0 | 20.0 |
| Մասնավոր դասուսույցների մոտ | 51.7 | 62.4 | 73.4 | 58.3 | 52.7 | 63.0 | 50.0 | 10.0 | 38.0 | 30.0 | 30.0 |
| Ինքնուրույն | 25.8 | 13.9 | 6.4 | 12.8 | 12.7 | 11.0 | 40.0 | 30.0 | 12.0 | 20.0 | 20.0 |
| Բարեկամի կամ ծանոթի մոտ անվճար | 1.2 | 17.6 | 7.4 | 10.8 | 23.0 | 16.0 | 0 | 55.0 | 34.0 | 20.0 | 30.0 |

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մասնավոր վճարովի պարապել են հարցված դիմորդների 62.0%-ը: Վճարովի պարապմունքներին չմասնակցած դիմորդների մոտ 76.3%-ը դա պատճառաբանել են հնարավորության բացակայությամբ, 23.7%-ը դրա անհրաժեշտությունը չեն զգացել:

Արտադասարանական և արտադպրոցական վճարովի պարապմունքներն ու վճարումներն ըստ դիմորդների և նրանց ծնողների

| | | Մասնավոր վճարովի պարապած դիմորդներ, մարդ | Վճարված գումարը, ընդամենը, ԱՄՆ \$ | Մեկ դիմորդի պարապած առարկաների քանակը | Մեկ առարկայի համար կատարված վճարը, ԱՄՆ \$ | Մեկ դիմորդի կատարած վճարը, ԱՄՆ \$ |
|-------------|----------------|--|-----------------------------------|---------------------------------------|---|-----------------------------------|
| Ընդամենը | ըստ դիմորդների | 186 | 105255 | 2.1 | 273.4 | 565.9 |
| | ըստ ծնողների | 182 | 102490 | 2.0 | 274.8 | 563.1 |
| Երևան | ըստ դիմորդների | 139 | 91745 | 2.2 | 295.0 | 660.0 |
| | ըստ ծնողների | 136 | 89180 | 2.2 | 296.3 | 655.7 |
| Գեղարքունիք | ըստ դիմորդների | 6 | 3850 | 2.2 | 296.2 | 641.7 |
| | ըստ ծնողների | 6 | 3850 | 2.2 | 296.2 | 641.7 |
| Լոռի | ըստ դիմորդների | 3 | 1600 | 2.7 | 200.0 | 533.3 |
| | ըստ ծնողների | 3 | 1600 | 2.7 | 200.0 | 533.3 |
| Շիրակ | ըստ դիմորդների | 27 | 4490 | 1.3 | 124.7 | 166.3 |
| | ըստ ծնողների | 26 | 7170 | 1.3 | 210.9 | 275.8 |
| Սյունիք | ըստ դիմորդների | 6 | 2070 | 1.3 | 258.8 | 345.0 |
| | ըստ ծնողների | 6 | 2070 | 1.3 | 258.8 | 345.0 |
| Տավուշ | ըստ դիմորդների | 5 | 1500 | 1.8 | 166.7 | 300.0 |
| | ըստ ծնողների | 5 | 1500 | 1.8 | 166.7 | 300.0 |

Արտադասարանական և արտադպրոցական մասնավոր պարապմունքների համար բնակչության կատարած փաստացի չհաշվառվող վճարումների չափերի գնահատման համար կատարվել են հետևյալ վերապահումները. նախորդ տարիների շրջանավարտ-դիմորդները հետազոտվող տարում լրացուցիչ վճարովի չեն պարապել և նրանք հանվել են գլխավոր համախմբից, և հարցման արդյունքների գլխավոր համախմբի վրա տարածման հնարավոր շեղումը կազմել է 5%: Հաշվարկների արդյունքները բերված են ստորև.

| | Դիմորդների թվաքանակը, հազ.մարդ | Հարցումներում ընդգրկված դիմորդների թվաքանակը, մարդ | Մասնավոր վճարովի պարապած դիմորդների %-ը հարցվածներից | Մասնավոր պարապած մեկ դիմորդի կատարած վճարը, ԱՄՆ \$ | Մասնավոր վճարովի պարապած դիմորդների հաշվարկային թվաքանակը, մարդ | Մասնավոր դասուսույցներին վճարված հաշվարկային գումարը, հազ. ԱՄՆ \$ |
|----------|--------------------------------|--|--|--|---|---|
| Ընդամենը | 12.5 | 300 | 62.0 | 565.9 | 6300 | 3565 |

Այսպիսով, ըստ գնահատումների, մասնավոր դասուսույցներին վճարված չհաշվառված գումարը կազմել է մոտ 3.6 մլն. ԱՄՆ դոլար:

Այն հարցին, թե ընտանիքն ի վիճակի է վճարելու ուսման սպասվելիք վարձը, դիմորդների և ծնողների պատասխանները հետևյալն են /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/.

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| | | Այո | Այո, սակայն դժվարությամբ | Ոչ |
|-------------|----------------|------|--------------------------|------|
| Ընդամենը | ըստ դիմորդների | 9.7 | 51.6 | 38.7 |
| | ըստ ծնողների | 6.3 | 56.0 | 37.7 |
| Երևան | ըստ դիմորդների | 12.5 | 49.0 | 38.5 |
| | ըստ ծնողների | 7.5 | 51.5 | 41.0 |
| Գեղարքունիք | ըստ դիմորդների | 10.0 | 80.0 | 10.0 |
| | ըստ ծնողների | 10.0 | 70.0 | 20.0 |
| Լոռի | ըստ դիմորդների | 10.0 | 55.0 | 35.0 |
| | ըստ ծնողների | 5.0 | 60.0 | 35.0 |
| Շիրակ | ըստ դիմորդների | 0 | 58.0 | 42.0 |
| | ըստ ծնողների | 0 | 72.0 | 28.0 |
| Սյունիք | ըստ դիմորդների | 10.0 | 60.0 | 30.0 |
| | ըստ ծնողների | 20.0 | 60.0 | 20.0 |
| Տավուշ | ըստ դիմորդների | 0 | 30.0 | 70.0 |
| | ըստ ծնողների | 0 | 40.0 | 60.0 |

Ըստ հարցված դիմորդների և ծնողների, ուսման ցանկալի վարձավճարի չափը 0-ից 600 ԱՄՆ դոլարի միջակայքում է:

| | | Վարձավճարի չափը /%-ով պատասխանների ընդհանուր քանակից/, ԱՄՆ դոլար | | | | | | | | | | | | | | | | |
|-------------|----------------|--|------|------|------|-----|-----|------|-----|------|-----|-----|------|------|------|------|------|-----|
| | | 0 | 30 | 50 | 60 | 70 | 80 | 100 | 120 | 150 | 160 | 180 | 200 | 250 | 300 | 400 | 500 | 600 |
| Ընդամենը | ըստ դիմորդների | 21.3 | 0.3 | 10.0 | 0.3 | 1.3 | 1.3 | 30.7 | 0.7 | 6.0 | - | - | 12.3 | 3.3 | 7.0 | 2.0 | 3.0 | 0.3 |
| | ըստ ծնողների | 18.7 | - | 10.0 | 1.0 | 1.3 | 1.7 | 27.7 | 0.3 | 5.7 | 0.3 | 0.3 | 18.7 | 2.3 | 8.7 | 1.7 | 1.7 | - |
| Երեվան | ըստ դիմորդների | 10.0 | - | 5.0 | - | 0.5 | 1.0 | 36.0 | - | 8.5 | - | - | 17.0 | 5.0 | 9.5 | 3.0 | 4.0 | 0.5 |
| | ըստ ծնողների | 10.5 | - | 7.0 | - | 0.5 | 1.0 | 28.0 | - | 7.0 | - | 0.5 | 26.0 | 3.5 | 11.5 | 2.5 | 2.0 | - |
| Գեղարքունիք | ըստ դիմորդների | 60.0 | - | - | - | - | - | 20.0 | - | - | - | - | - | 10.0 | - | 10.0 | - | - |
| | ըստ ծնողների | 10.0 | - | 30.0 | - | - | - | 30.0 | - | - | - | - | 10.0 | - | 10.0 | - | 10.0 | - |
| Լոռի | ըստ դիմորդների | 90.0 | - | 10.0 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| | ըստ ծնողների | 80.0 | - | 15.0 | - | - | - | - | - | - | - | - | 5.0 | - | - | - | - | - |
| Շիրակ | ըստ դիմորդների | 28.0 | - | 30.0 | - | 6.0 | 4.0 | 26.0 | 4.0 | 2.0 | - | - | - | - | - | - | - | - |
| | ըստ ծնողների | 26.0 | - | 14.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 34.0 | 2.0 | 4.0 | 2.0 | - | - | - | - | - | - | - |
| Սյունիք | ըստ դիմորդների | 50.0 | - | - | - | - | - | 10.0 | - | - | - | - | 30.0 | - | 10.0 | - | - | - |
| | ըստ ծնողների | 30.0 | - | 10.0 | - | - | - | 10.0 | - | 10.0 | - | - | 20.0 | - | 20.0 | - | - | - |
| Տավուշ | ըստ դիմորդների | 10.0 | 10.0 | 30.0 | 10.0 | - | - | 40.0 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| | ըստ ծնողների | 20.0 | - | 20.0 | - | - | - | 60.0 | - | - | - | - | - | - | - | - | - | - |

Դպրոցական կրթության որակի բարձրացման ուղղությամբ հարցված շրջանավարտների 70.7%-ի հավաստմամբ իրավիճակի կտրուկ բարելավում կլինի, եթե ուսուցիչների վճարաչափն էապես բարձրացվի: Եթե հարցված դիմորդների 22.0%-ը կողմ է դպրոցում լրիվ կամ մասնակի վճարովի ուսուցմանն անցնելուն, ապա 96.0%-ը գտնում է, որ ուսումը ԲՈՒՀ-ում պետք է լինի անվճար:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Առաջարկություններ հանրակրթական համակարգի որակի բարձրացման ուղղությամբ /տոկոսներով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|--|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Ուսուցիչների վարձատրումը լինի բարձր | 50.0 | 71.0 | 68.5 | 74.7 | 70.7 | 74.5 | 80.0 | 90.0 | 40.0 | 80.0 | 90.0 |
| Անցնել վճարովի դպրոցական ուսուցման | 4.0 | 4.0 | 4.9 | 1.7 | 5.7 | 6.0 | 20.0 | 5.0 | 4.0 | 0 | 0 |
| Վճարովի դարձնել որոշ առարկաների ուսուցումը | 43.7 | 13.5 | 16.3 | 16.4 | 16.3 | 9.5 | 0 | 5.0 | 54.0 | 20.0 | 0 |
| Այլ | 2.3 | 11.5 | 10.3 | 7.2 | 7.3 | 10.0 | 0 | 0 | 2.0 | 0 | 10.0 |

Այն հարցին, թե ճիշտ կլինե՞ր ընդունելության քննությունները հանձնվելին դպրոցներում դրական պատասխան են տվել միայն 8.0%-ը:

Դիմորդների վերաբերմունքն ընդունելության քննությունները դպրոցում հանձնելուն /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|-------------------------|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Այո | 17.3 | 8.0 | 7.4 | 11.8 | 8.0 | 9.0 | 40.0 | 5.0 | 0 | 10.0 | 0 |
| Ոչ | 76.7 | 81.0 | 85.2 | 70.4 | 75.7 | 82.0 | 20.0 | 70.0 | 58.0 | 90.0 | 90.0 |
| Դժվարացել են պատասխանել | 6.0 | 11.0 | 7.4 | 17.8 | 16.3 | 9.0 | 40.0 | 25.0 | 42.0 | 0 | 10.0 |

Պատասխանների 13.7%-ում արտահայտվում է անբավարարվածություն քննությունների հանձնման գործող համակարգի նկատմամբ, իսկ 61.0%-ը գոհ է:

Դիմորդների 93.0%-ը համամիտ է իրենց ընտրած մասնագիտությունների համար հայտագրված քննական առարկաների ընտրության հետ, չթաքցնելով դժգոհությունն, որ որոշ առարկաների ուսուցման ծրագրերի գծով առայժմ կան անորոշություններ (հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն, օտար լեզուներ), 7.0%-ը արտահայտել է անհամաձայնություն:

Եթե դիմորդների 75.0%-ի վերաբերմունքը բավարար է քննությունների ընթացքի վերաբերյալ, ապա 25.0%-ը ունի հակառակ կարծիք: Դիմորդներից 35-ը բողոքարկել են քննության արդյունքները, որոնց 54.3%-ը մնացել են չբավարարված:

Վերաբերմունքը ընդունելության քննություններին /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|---|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Բավարար է | 31.9 | 46.0 | 53.7 | 44.4 | 54.3 | 59.0 | 90.0 | 0 | 48.0 | 50.0 | 70.0 |
| Քննական հանձնաժողովի անդամները լավ են տրամադրված | 13.3 | 26.0 | 20.2 | 16.8 | 20.7 | 21.0 | 0 | 0 | 28.0 | 50.0 | 10.0 |
| Քննությունների ընթացքը ճնշող է, կան արհեստական դժվարություններ | 13.3 | 15.0 | 15.7 | 11.2 | 11.3 | 10.5 | 10.0 | 15.0 | 16.0 | 0 | 10.0 |
| Կան անարդարություններ, քննական հանձնաժողովի անդամները վատ են տրամադրված | 27.7 | 13.0 | 10.4 | 27.6 | 13.7 | 9.5 | 0 | 85.0 | 8.0 | 0 | 10.0 |

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բավարարվածությունը բնության արդյունքների բողոքարկումից և դրանց պատճառները /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|--|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Բողոքարկման արդյունքները | | | | | | | | | | | |
| Բավարարել են | 27.1 | 29.0 | 24.7 | 24.2 | 45.7 | 28.6 | 0 | 0 | 40.0 | 100.0 | 100.0 |
| Չեն բավարարել | 72.9 | 71.0 | 75.3 | 62.9 | 54.3 | 71.4 | 100.0 | 0 | 60.0 | 0 | 0 |
| Դժվարացել են պատասխանել | 0 | 0 | 0 | 12.9 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Եթե չեն բավարարել, ապա | | | | | | | | | | | |
| Դա կրում է ձևական բնույթ | 27.1 | 29.0 | 24.7 | 24.2 | 63.2 | 73.3 | 0 | 0 | 33.4 | 0 | 0 |
| Դիմորդը չի կարողացել հաստատել իր ճշմարտացիությունը | 72.9 | 71.0 | 75.3 | 62.9 | 15.8 | 13.3 | 0 | 0 | 33.3 | 0 | 0 |
| Ստեղծվում են արհեստական բարդություններ | 0 | 0 | 0 | 12.9 | 21.1 | 13.4 | 100.0 | 0 | 33.3 | 0 | 0 |

Պետպատվերով ԲՈւՅ չընդունվելու դեպքում ծնողների 37.0%-ը համաձայն է, որ երեխան դիմի վճարովի բաժին կամ ոչ պետական ԲՈւՅ, 35.0%-ը համաձայն չէ (մի մասը վճարունակ չլինելու, մյուս մասը՝ ոչ պետական բուհերին չվստահելու պատճառով):

Չընդունվելու դեպքում դիմորդների 58.7%-ը նորից կփորձի ընդունվել ԲՈւՅ հաջորդ տարի, 15.3%-ը՝ կմեկնի բանակ, 8.7%-ը՝ կլքի հանրապետությունը, 5.7%-ը՝ կփորձի աշխատել, 5.3%-ը՝ դիմելու է ոչ պետական բուհ, 3.7%-ը՝ կամուսնանա, 2.7%-ը՝ ոչ մի բանով չի զբաղվի: Աշխատել ցանկացողների 71.9%-ը աշխատանք գտնելու ակնկալիք չունի:

Աշխատանքի ցանկություն հայտնողները և աշխատանք գտնելու հնարավորությունները /տոկոսով պատասխանների ընդհանուր քանակից/

| | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000թ. ըստ մարզերի | | | | | |
|--|------|------|------|------|------|--------------------|-------------|------|-------|---------|--------|
| | | | | | | Երևան | Գեղարքունիք | Լոռի | Շիրակ | Սյունիք | Տավուշ |
| Աշխատելու են | 53.3 | 13.0 | 8.4 | 7.9 | 5.7 | 5.5 | 10.0 | 5.0 | 6.0 | 10.0 | 0 |
| Աշխատանքի ակնկալիք ունեն | 64.5 | 61.5 | 33.5 | 43.0 | 26.8 | 20.6 | 30.0 | 5.0 | 52.0 | 90.0 | 0 |
| Աշխատանքի ակնկալիք չունեն | 35.5 | 38.5 | 66.5 | 57.0 | 71.9 | 77.4 | 70.0 | 95.0 | 48.0 | 10.0 | 100.0 |
| Աշխատանք գտնելու համար դիմելու են | | | | | | | | | | | |
| աշխատանքի և զբաղվածության համապատասխան ծառայություններին | 7.6 | 2.3 | 3.9 | 13.1 | 9.6 | 10.7 | 0 | 0 | 14.3 | 0 | 0 |
| ծնողներին, բարեկամներին և ընկերներին | 52.2 | 56.8 | 52.0 | 64.7 | 65.0 | 58.8 | 100.0 | 75.0 | 77.5 | 50.0 | 88.9 |
| հետևելու են հայտարարություններին | 40.2 | 40.9 | 44.1 | 22.2 | 25.4 | 30.5 | 0 | 25.0 | 8.2 | 50.0 | 11.1 |